

ուրիշներ կը թողուին դիւրաւ իրենց քրիստոնէական հաւատքը: Այս վարդապետներու կենցաղը շատ շինիչ է եւ համեստ. անոնց զգեստը անպաճոյճ է եւ կը կրեն մարմնոյ վրայ կարծր քուրճ մը. ունին շատ եւ երկար պահքի օրեր. միւս միայն տարւոյն հինգ զլխաւոր տօներուն կը ճաշակեն, իսկ գինի՝ ինչ ինչ տօնական օրերուն միայն կը խմեն: Բացի սովորական ժամասացութենէ կը քաղեն օր աւուր բովանդակ սաղմոսարանը. զիչերուան մեծագոյն մասը կ'անցնեն հսկմամբ. եւ երբ կը յառնեն առաւօտը՝ ժամերգութիւնը սկսելէ յառաջ ընդհանուր խոստովանանք կ'ըլլան եւ կու տան հաւատոյ դաւանութիւնը, այս ամէնը կէս ժամէ աւելի կը տեւէ: Մեծ փութով ուշագիւր են մանկանց կրթութեան, զորոնք կը հրահանգեն իրենց կրօնի մէջ: Ապահանի մէջ հինգ զպրոց ունին. ուր կ'աշխատին բերանացի սորվեցնել մանկանց սաղմոսներն եւ Ս. Գրքէն զանազան բաներ»:

Տեղեկատուն ի մօտոյ ծանօթ էր Մովսէս, Պաշատուր եւ Արիստակէս վարդապետներու:

22. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒ-
ԹԻՒՆԸ

Ինչպէս կարօտ էր եկեղեցականութիւնը հոգեպէս եւ մարմնապէս բարեկարգուելու, նոյնպէս եկեղեցին պէտք ունէր բարեզարդուելու ներքուստ եւ արտաքուստ: Բաւական չհամարեցան վերանորոգչական գործին աշ-